

բարոյական ըստ կարելոյն շոտով գտնելու
իրեն արժանաւոր փեսայ մը: Յաջորդ օրը զաւ
նի գտաւ իր դրան առջեւ դանակը սրտին:

Կիւնեաւ խնայել հրաժարեցաւ իր մարդա
սիրական առարկաներէն եւ երդոյնեցաւ անկի
վերջ գոհանալ չարն արգիւնելով:

Ժամանակ մը վերջ, խնացաւ իր մեկ բարե
կամին ռազմագործութեան դիտողը: Ոստիկա
նութեան պիտի իմացնէր, սակայն նախընտրեց
նախն արգիւնել՝ քան վնասել ռազմագործին:

Ոստի ինքզինքը միջամիտեց անոր կատարե
լիք գործին. քելը ձեռք անցոյց՝ միշտ պահուել
սպասեց հարուածը վրիպեցրնելու:

Բայց կրքեր ուզած սրիկան հասկցաւ խաղը,
գործը փոխեց, եղեւոր գործունեցաւ, հեղինակն
արձակուեցաւ, իսկ Կիւնեաւ ձերբակաշռեցաւ:

Ընդհանուր դատաստագիտել գործքիւնը ընդ
դեմ Կիւնեաւի հրաշակերտ մ'եր: Յիշեց ամ
բաստանեալին կեանքը, եպերելի մանկութիւն
նը, պատիժները, մերժումը քննութիւններէն,
յանդուգն գործքիւնը, բանտին ապստամբու
թեան մէջ դաշակցութիւնը, Կայենային փա
խուստը, Ֆրանսա վերադարձը կեղծ անունով:

Ս.Յ. կետէն սխալ աւ իր դատական հեւ
տորութեան ծայրագոյն կորովը ցոյց տուաւ:

Վատահամբաւեց այդ բարոյական կեղծա
բարը, պարկեշտ ընտանիքներու ապականելը,
որ իր կիրքերուն յագորդ տալու համար աշ
րերը գինեւտուն կը դրկէր իր դրամով խնդու,
այդ կեղծ բարեբարը՝ որ վնասակար նուշե
րներով կը ջանար բարեկի ժողովրդականու
թիւն մը ստանալ այդ կեղծ մարդասեր հրեշտ:

Զարնոյրանքով մը նկարագրեց անոր խո
րանակ շարքիւնը իրեն եղեւորագործի մը
որ կատարած շունկը հաշարելով ժողովրդեան
մէջ կ'արձակէր զանոնք. այդ բուն չարասեր
դեշին համար՝ որ ինքզինքը ջախջախելու վը
տանգին մէջ կը դէր կեցրնելով կատարած ձի
մը՝ վայելելու համար սարսափելի հրձուակքը՝
երբ ան (ձիւն) կը նետուէր ամբոխին վրայ եւ
կը ձգուէր ծեր, կիւն ու մանուկ:

Ահ, այդ բշտաշատակուն ամեն բանի կարող
էր: Սնտարակոյս այնպիսի ռախներ ալ գոր
ծած էր որոնք ընդ միշտ անյայտ պիտի մնա
յին: Իսկ իր խնամած որդիներէն իրեն զատ
նի կրնար սպաննած ըլլալ. այդ տրամը ամօ

բաշի գործի մը վերջապահէն էր անշոշտ: Ս.Յ.
դիրքին մէջ՝ հարկ կ'աւ պնդել վերջին ռախ
րին վրայ. ամբաստանեալին ուրացոյթեան
դեմ ստուգութիւնը կար մեղտել:

Ոչրեմն օրենքի բոլոր ուժով պետք էր դա
տարարել այդ մարդը: Եղեւորագործէ աւելի
եղեւոր ոգիին դեմ էր խնդիրը. չար ու կեղ
ծաւոր հրեշտ մը՝ որ կարծես պահ մը մեզի
տարակոշտի կոշ տան առարկանութեան գոյու
թիւնը եւ յոռաշրջող մարդկութեան:

Ս.Յ. ստեղծականէն վերջ Կիւնեաւի փաւ
տարանը անոր պաշտպանութեան փաւտ՝ յի
մարտքիւնը միայն գտաւ: Անկէ միգ քափեց
խօսեցաւ ախտաբանական տեսակետով, ձառեց
ընտանքեան մասին, զանի ներկայացոյց իր
րեւ աւարտասխանատու մեղանով մը, եւ եզ
րակացոյց քէ այսպիսի ախտաւորներ յիմա
րանոցին մէջ կը բռնուին եւ ոչ քէ կառարի
նատով: Սակայն միաձայն հաշտութեանը Կ.
Կիւնեաւ մահուան դատարարութեան:

Առարկիւն եւ չարատեսը մարդիկը ուրախ
գոչեցին. Արժանի է:

Կ. Կիւնեաւի մահը իր մանկութեան պէս
օրինակելի բայց անբախտ եղաւ: Ան կառարի
նատի պատուանդանին վրայ պարզ, անխռով
եւ խաղաղ էր ինչպէս իր գիտակցութիւնը. մար
տիրոսի մը պէս անդորր, զոր ամենքը բոյլ
անատունի տեղ դրին: Օրհնասի անեղ պահուն
գիտակցով որ դահիձը աղքատ մըն էր եւ ըն
տանեաց հայր, դաշն ձայնով մը խնացոյց քէ
անոր կտակած էր իր ամբողջ ժառանգութիւնը,
այնպէս որ դահիձը յոգնուած ստիպուեցաւ
երբ անգամ իջեցրնել կացիներ իր բարեբարը
գիտատելու համար:

Երբ ամիս վերջ, Կոստանի մեկ բարեկա
մը, իր երկար ուղեւորութեան վերադարձին՝
չսեց տխուր վախձանը առարկիւն մարդուն՝
որուն արժանիքը ինքը միայն կը ձանչնար:

Գարնանելու համար ձախտագրի անար
դարութիւնը՝ գերեզմանատան մէջ խորշ մը
գնեց, մարմարէ յոշարձան մ'ապստեց եւ իր
բարեկամին տապանագիր մը յօրինեց: Յաջորդ
օրը կարգաւաճաւ մեռաւ: Բայց ծախքերը
կանխապէս վճարած ըլլալով, իր շիրիմն ու
նեցաւ գիտատուած մարդը:

Սակայն տապանագիրը փորագրողը՝ վրի

պակով մը Ե գրին տեղ Դ դրաւ ֆրանսերէն
Bien բառին մէջ, եւ հէք Կոստանը, անար
գոռած իր կենդանութեան օրով, մահէն վերջն
ալ բաղդած կը մնայ այս արձանագրի տակ:

Հոս կը հանգչի Կոստան Կիւնեաւ
Ոչինչ մարդը (Homme de Rien)

Jean Richopin

Ծան. — Հեղինակը՝ այս մտացածին վիպակով՝ իր
հնարամտութիւնը ցոյց տուած է առանց առաքելները
վհատեցնել ուղեւոր:

Խմբ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՓՐՈՓ. ՅԱՐՈՒԹԻԿՆ ՊԱՐՏԻՉԵԱՆ, Մուրա
Ռափայէլեան Վարժարանի նախկին ղալկերտ,
տարւոյս սկիզբները, Հոռմի մէջ. Բժշկական
քննիչ յանձնախումբէն իբրեւ յաջող մասնագէտ
մանկաբոյժ հռչակուեցաւ, կարգուելով միան
գամայն ուսուցչապետ — դասախօս Միւնի Հա
մալսարանին իր մասնագիտական բաժնին: Մեր
անկեղծ շնորհաւորութիւնները յարգելի Փրոֆե
սորին, որուն թանկագին ձեռքերն եւ ազգասէր
սիրտը այնքան սիրելի ըրած են զինք հայերուս
եւ բոլոր վենետիկ ժողովուրդական եւ բարձր ըր
ջանակներուն:

ՏՈՒԹ. ՄԻՍԱԲ ՏԱՔԵՍԵԱՆ, Պէյրութի հայ
բժիշկներէն, ընտրուած է ցկեանս պատուոյ ան
դամ Ֆրանսական Կաճառին: Եզակի պատիւը
որուն արժանացած է յարգելի բժիշկը, արժանի
է ամբողջ ազգայիններուս խնդակցութեան:

ՎԱՐԴԱՆ ՄԱՌՈՒԵԱՆ, Այվազովսքի ար
ժանաւոր յաջորդ հայ ծովանկարիչը, Նիսի մէջ
երեսունի չափ նկարներու ցուցահանդէս ըրած
է, այս անգամ ալ Ֆրանս. երեւելի արուեստա
գէտներու գնահատութեան արժանանալով: Հի
ներուն վրայ նոր յաղթանակ մ'է աս ալ՝ փառք
հայ հանճարին, որուն համար կը փութանք
խնդակցել մեր ազնիւ բարեկամին եւ մեծ հային:

«ՄԱՐԻ ՆՈՒՊԱՐ» ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՆ
հանդիսաւոր բացումը կատարուեցաւ Բարիգի
մէջ Դեկտ. 16ին՝ հախազահուած մը կրթ. հա
խարար Շօթանի որ հետն ունէր Ֆրանս. Հա

մալսարանի Ընդհանուր Վերադասու Շարքի
Օնօրա. ներկայ էին ազգայիններու խումբ բազ
մութիւն մը եւ պաշտօնական անձեր:

Հայերէն եւ ֆրանսերէն ճառերով դրուատուե
ցաւ անմահ հայուն՝ Պօղոս Նուպար փաշայի
անունն եւ կանգնած ազգային տունը: Երախտա
գիտութեան յատուկ պատկ մ'ալ մեզմէ, քանի
որ այդ մեծ Հայը այդ Տան մէջ բնակելու նա
խապատուութիւն տուած է Բարիգ ուսանող Մ.
Ռափայէլեան սաներուն:

Մ. ՌԱՓ. Ն. Ա. ՄԻՈՒԹԻԿՆ, Բարիգի մեր
Մուրաթեան Վարժարանին մէջ Ամանորին առի
թով իր անդամներուն թէյասեղան մը տուած է
Յունուար 4ին: Հաւաքոյթին նպատակը՝ ընկե
րական հաճելի ժամանց, ազգային մթնոլորտի
մը մէջ հոգիներու ձուլում եւ լաւագոյն նպա
տակներու հետապնդումն եղած է, ինչպէս որ
բացատրած է գեղեցկօրէն Պ. Սինանեան: Միւ
թարի, Ալիշանի եւ Պէշիկթաշլեանի ոգեկոչումով
խանդավառ երգած են ազգային երգեր եւ ճառեր
արտասանած Մուրաթ — Ռափայէլի յիշատակն
օրհնելով:

ՌՈՒԹԵՆ ՈՐԲԵՐԵԱՆ, ազնիւ եւ սիրուած դէմք
մը, ազգասէր գործունէութեան ու գրական գե
ղեցիկ փառքի մը մէջ կնքեց իր մահկանացուն
56 տարեկանին՝ Բարիգի մէջ, ի սուգ համակե
լով ամէնքը որ զինքը ճանչցած էին ու սիրած:
Հայ մատկնագրութեան պանթէոնին մէջ ան
կը թողու զգայուն եւ խորհրդաւոր բանաստեղծի
քնքոյշ տիպարը. եւ այդ իսկ է իր անմահութիւնն
ու փառքը:

ԺՈՓՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ. — Հայրենիքի եւ ազա
տութեան յաղթական հերոսին սգալի մահը գու
թելու պահուն՝ հայկական յուշ մ'է որ կը քա
ղենք իր կեանքէն: — Մարտիկոյ Հայ Երիտ.
միութիւնը՝ որ մեծ Սպարապետին մարաշախ
տութիւնը շնորհաւորած էր 1916ին, կը ստա
նար հետեւեալ գեղեցիկ տողերը.

«Շնորհակալ եմ սրտագին շնորհաւորումնե
րուն համար: Չեմ ատարակուսիր որ մեր բանակ
ները պիտի յաղթեն բարբարոս թշնամիներուն,
արդարութեան եւ իրաւունքի յանձնակին հա
մար եւ որ ճնշուած ժողովուրդները, որոնց մէջ
Հայերը, մօտիկ ապագայի մը մէջ պիտի վե
րագրուեն իրենց վայել տեղը»:

ԺՈՓՐԸ